

ԼԵՆԻՆԳՐԱԴԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Արդեն ավանդություն են դարձել Լենինգրադի և Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանների շրջանավարտ ուսանողների փոխայցելությունները: Այս անգամ մայիսի 9—14 օրերին Մայր Աթոռի հյուրն էին Լենինգրադի հոգևոր ճեմարանի տասը ուսանողներ՝ ուղեկցությամբ ճեմարանի երկու դասախոսների և ղեկավարությամբ ավագերեց պրոֆ. Իոհանի:

Մայիսի 9-ին, երկուշաբթի, Երևանի «Զվարթնոց» օդանավակայանում հյուրերին դիմավորում և բարի գալուստ են մաղթում Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը և Սմբատ սրկ. Արիստակեսյանը: Օդանավակայանից հյուրերը առաջնորդվում են դեպի Ս. Էջմիածին և տեղավորվում Վանատանը:

Նույն օրը Վեհարանի հյուրասրահում հյուրերին ընդունում և բարի գալուստ է մաղթում Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ Տ. Սիոն արքեպ. Մանուկյանը: Ընդունելության ժամանակ սրբազան հայրը նրանց համառոտակի ծանոթացնում է Հայ Առաքելական Եկեղեցու պատմությանը՝ շեշտելով Ս. Էջմիածնի նշանակալի դերը հայ ժողովրդի կյանքում: Պատասխան խոսքով հանդես է գալիս պրոֆ. Իոհանը՝ նշելով, որ ինքը և խմբի մյուս անդամները առաջին անգամ են լինում Հայաստանում և կրկնակի ուրախություն են ապրում, որովհետև Հայոց երկիրը ս. գրական երկիր է, և իրենք գտնվում են Հայ Եկեղեցու մոտ երկհազարամյա պատմական կենտրոնում: Այնուհետև սրբազան հայրը հյուրերի ուշադրությանն է հանձնում նրանց համար նախապատրաստված այցելությունների ծրագիրը:

Ընդունելությունից հետո հյուրերը այցելում են Վեհարանի թանգարանային բաժինը, իսկ ավելի ուշ՝ մասնակցում Մայր տաճարում տեղի ունեցող երեկոյան ժամերգությանը:

Մայիսի 10-ին, երեքշաբթի օրը, առավոտյան, հյուրերն այցելում են Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, որտեղ նրանց ընդունում է Մատենադարանի տնօրեն Սեն Արևշատյանը: Նա մանրամասն տեղեկություններ է հաղորդում հյուրերին Մատենադարանում պահվող ձեռագրերի և այդ ձեռագրերի ուսումնասիրման ուղղությամբ տարվող աշխատանքների մասին:

Այնուհետև շնորհակալության խոսք է ասում ավագերեց պրոֆ. Իոհանը և Մատենադարանին է նվիրում Լենինգրադի հոգևոր ճեմարանի կողմից հրատարակված մի շարք աստվածաբանական ուսումնասիրություններ: Հյուրերը մեծ հետաքրքրությամբ ծանոթանում են Մատենադարանում ցուցադրված հայկական հնադարյան ձեռագրերի արժեքավոր նմուշներին:

Նույն օրը, ժամը 12-ին, հյուրերը մեկնում են Գառնի, այցելում հեթանոսական տաճար և ապա ուղևորվում Ս. Գեղարդ: Ս. Գեղարդ վանքում հյուրերին դիմավորում և բարի գալուստ է մաղթում վանահայր Տ. Եղիշե ավագ քհն. Սարգսյանը: Այնուհետև Տ. Մովսես քհն. Ղազարյանը նրանց ծանոթացնում է վանքի պատմությանը: Վերադարձին հյուրերն այցելում են նաև Երևանի Ս. Սարգիս եկեղեցի և լինում մայրաքաղաքի տեսարժան վայրերում:

Մայիսի 11-ին, չորեքշաբթի օրը, ուսանողների խումբը մեկնում է Սարդարապատ: Այս-

տեղ Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը նրանց պատմում է Սարդարապատի ճակատամարտում, հանուն իր երկրի պաշտպանության և անկախության, հայ ժողովրդի մղած հերոսական պայքարի մասին: Հյուրերը այցելում են Սարդարապատի ազգագրական թանգարան, ապա մեծ տպավորությունների ներքո ուղեվորվում Օշական՝ Ս. Մեսրոպի շիրիմի առաջ իրենց աղոթքը ասելու:

Կեսօրից հետո հյուրերն այցելում են հոգևոր ճեմարան: Ճեմարանում նրանց ընդունում և բարի գալուստ է մաղթում փոխտեսուչ Տ. Հայկազուն վրդ. Նաջարյանը: Հայր սուրբը նրանց ծանոթացնում է ճեմարանի ուսումնական ծրագրին, այնտեղ տարվող ուսումնադաստիարակչական աշխատանքներին և վերջում հայտնում, որ հետայսու է՛լ ավելի կսերտանան բարեկամական կապերը երկու հոգևոր դպրոցների միջև:

Մայիսի 12-ին, հինգշաբթի օրը, Մայր տաճարում մատուցվում է ս. պատարագ Համբարձման տոնի առթիվ: Հյուրերը մեծ հետաքրքրությամբ և հիացմունքով են հետևում հայոց պատարագի սրբալան արարողությանը:

Պատարագից հետո նրանք այցելում են պատմական Վաղարշապատի Ս. Հռիփսիմե, Ս. Շողակաթ և Ս. Գայանե վանքերը ու խոր երկյուղածությամբ աղոթում նահատակ կույսերի շիրիմների առջև:

Մայիսի 13-ին, ուրբաթ օրը, առավոտյան ժամը 10-ին, հյուրերն այցելում են Ծիծեռնակաբերդ և ծաղիկներ վետեղում Հայ նահատակաց հուշարձանին՝ իրենց հարգանքի տուրքը մատուցելով Մեծ եղեռնի զոհերի հիշատակին: Այնուհետև նրանք ուղևորվում են Սևան:

Մայիսի 14-ին, շաբաթ օրը, վաղ առավոտյան, հյուրերը հրաշեժտ են տալիս Մայր Աթոռին և լավագույն տպավորություններով ու շնորհակալ զգացումներով վերադառնում Լենինգրադ: